ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2471 - Ա **09 ապրիլի 2009թ.**

ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 5/8 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՉԻԿ ՅՈՒՐԻԿԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ, ՀԱՅԿ ՅՈՒՐԻԿԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ, ԳԵՎՈՐԳ ՅՈՒՐԻԿԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ, ԵՂԻՍԱԲԵԹ ԻՍԱՋԱՆԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ, ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԼՈՔՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Խաչիկ Յուրիկի Մելքումյանի (ծնված 07.09.1982թ.), Հայկ Յուրիկի Մելքումյանի (ծնված 15.03.1984թ.), Գևորգ Յուրիկի Մելքումյանի (ծնված 09.03.1990թ.), Եղիսաբեթ Իսաջանի Մելիքյանի (ծնված 00.00.1911թ.), Սվետլանա Խաչատուրի Լոքյանի (ծնված 15.10.1955թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Եղիշե Թադևոսյան փողոցի հ.5/8 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 548.11քմ, որից 406.31քմ մակերեսով հողամասը Խաչիկ Յուրիկի Մելքումյանին, Հայկ Յուրիկի Մելքումյանին, Գևորգ Յուրիկի Մելքումյանին, Եղիսաբեթ Իսաջանի Մելիքյանին, Սվետլանա Խաչատուրի Լոքյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (470քմ մակերեսով հողամասից օգտագործվում է 406.31քմ մակերեսով հողամասը): Օրինական հողամասին կից օգտագործվող 141.8քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1993 թվականը, 26.11.2003թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 20.03.2009թ. հ.20/2-Ե-132 գրությունը, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 10.03.2009թ. հ.20-Ել-1638 եզրակացությունը, համաձայն որի Եղիշե Թադևոսյան փողոցի հ.5/8 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Եղիշե Թադևոսյան փողոցի հ.5/8 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Խաչիկ Յուրիկի Մելքումյանի, Հայկ Յուրիկի Մելքումյանի, Գևորգ Յուրիկի Մելքումյանի, Եղիսաբեթ Իսաջանի Մելիքյանի, Սվետլանա Խաչատուրի Լոքյանի

հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 406.31քմ մակերեսով հողամասին կից 141.8քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 141.8քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Եղիշե Թադևոսյան փողոցի հ.5/8 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Եղիշե Թադևոսյան փողոցի հ.5/8 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Խաչիկ Յուրիկի Մելքումյանի, Հայկ Յուրիկի Մելքումյանի, Գևորգ Յուրիկի Մելքումյանի, Եղիսաբեթ Իսաջանի Մելիքյանի, Սվետլանա Խաչատուրի Լոքյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Շենգավիթ թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**